երևեալ հրեշտակ Աստուծոյ՝ ասաց, Քրիստոս փրկիչն աշխարհի ոչ ել 'ի տեղւօ յայս գործարեալ: Եւ իբրև լըւաւ, պատառատուն հանդերձիւ եբարձ զխաչն, և բացաւ դուռն: Սա հրամայեաց զեկեղեցին Հռոմայ զլուխեկեղեցի ասել. զի Կոստանդիանոսէ մինչ 'ի սա՝ զՍտամպօլայ եկեղեցին գլուխ առնէին՝ վասն թագաւորութեանն: Սա խաչն Քրիստոսի յերկուս բաժանեաց, զմասն յԵրուսաղէմ և զմասն յՍտամպօլ ետ. և հիւանդացեալ և անդամալոյծ լեալ մեռանի խորով մահուամբ, բայց անխծիւք. զի էառ զդուստր եղբօր իւրոյ 'ի կնութիւն: Առ սա գնաց Կաթուղիկոսն Եզր, և եղև երկարնակ, և մինչ ի.Օ. Կաթուղիկոս մնացին Քաղկեդոնիկ:

Կոստանդին չորրորդ սկսաւ յամի Տեառն .ՕՃԼԳ. ինքնակալեալ ամս ԻԵ: Սա ընդ Հռոմայ եկեղեցոյն գոլով միաբան, գնացեալ 'ի Հռոմ քակեաց զգեղե-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան